ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

19.03.2019 №19.3.2

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԽ 19□01□2019 թիվ 17.1 ՈՐՈՇՄԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՇՊՀ կանոնադրության 41-րդ կետի 16-րդ ենթակետով և ՇՊՀ ՀԽ-ի աշխատակարգի 2.2.16-րդ կետով՝ Շիրակի Պետական Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ամփոփելով ՇՊՀ կանոնադրության փոփոխությունների բոլոր ընդունված առաջարկությունները, Լ.Բաբսեղյանը քվեարկության դրեց ՇՊՀ կանոնադրությունը 2019թ. հունվարի 19-ի եւ մարտի 19-ի ՇՊՀ հոգաբարձուների խորհրդի նիստերի որոշումներով խմբագրված բովանդակությամբ հաստատելու հարցը.

Կետ 5

3) անգլերեն լրիվ՝ «M. Nalbandyan State University of Shirak» Foundation.
4) անգլերեն կրճատ՝ SUSh.
5) ռուսերեն լրիվ՝ Фонд «Ширакский государственный университет имени М. Налбандяна».
6) ռուսերեն կրճատ՝ Фонд «ШГУ».

Կետ 10

10. ՇՊՀ-ն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

Կետ 17

11. աշխատողների, սովորողների եւ արտաքին շահառուների հանրային սննդի, հանգստի, կենցաղի կազմակերպում ու սպասարկում:

Կետ 20

ՇՊՀ-ն իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով իրավունք ունի

1) իրականացնելու բարձրագույն, հետբուհական կրթություն, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով հանրակրթական, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և լրացուցիչ կրթության ծրագրեր.

2) մշակելու և հաստատելու բարձրագույն ու հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը, հրատարակելու ուսումնական գրականություն և ուսումնամեթոդական ձեռնարկներ.

3) ինքնուրույն որոշելու ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական տեխնոլոգիաների և սովորողների ընթացիկ ատեստավորման ձևերի, կարգի ու պարբերականության ընտրության հարցերը.

4) ըստ կրթական ծրագրերի՝ կազմակերպելու դիմորդների, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը և ուսումնական գործընթացը.

5) կազմակերպելու մասնագետների որակավորման բարձրացման, վերապատրաստման և լրացուցիչ կրթության այլ ծրագրեր.

6) որոշելու իր կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման կարգը, օրենքով սահմանված կարգով ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու ֆակուլտետներ, ամբիոններ, գիտահետազոտական ինստիտուտներ, կենտրոններ, քոլեջներ, ավագ դպրոցներ, այլ կառուցվածքային ստորաբաժանումներ, ինչպես նաև ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինելու դրանց մասնակիցը.

7) ինքնուրույն որոշելու բոլոր տարակարգերի աշխատողների հաստիքացուցակը, իրականացնելու աշխատողների ընտրությունը, նշանակումը, բաշխումը և ատեստավորումը՝ ներառյալ գիտամանկավարժական համակազմի համալրումը, պրոֆեսորադասախոսական համակազմի, գիտական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնների զբաղեցման կարգերը.

8) մշակելու ընտրովի պաշտոնների ու պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության ընթացակարգերը և անցկացնելու նրանց ընտրությունները.

9) սահմանելու և շնորհելու ՇՊՀ-ի պատվավոր կոչումներ, շքանշան, մեդալ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, անվանակոչելու լսարաններ, ստորաբաժանումներ.

10) իրականացնելու հրատարակչական, տպագրական գործունեություն.

11) իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա երկկողմանի ու բազմակողմանի կապեր իրականացնելու հանրապետության և օտարերկրյա համալսարանների, գիտական հիմնարկների, պետական մարմինների, այլ կազմակերպությունների, հաստատությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ, կատարելու տարատեսակ աշխատանքներ (մասնագետների պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում՝ ուսուցման բոլոր ձևերով, ուսանողների և ասպիրանտների ուսուցում, մասնագետների փոխանակում, գիտական, մշակութային-լուսավորչական և այլ գործունեություն, գիտական խորհրդակցությունների ու արշավախմբերի կազմակերպում և այլն), օտարերկրյա պետություններում ստեղծելու ստորաբաժանումներ և այլն.

12) ՇՊՀ-ի հիմնական և ձեռնարկատիրական գործունեության ընդլայնման նպատակով պայմանագրային կարգով ներգրավելու այլ անձանց կողմից տրամադրվող միջոցներ, ընդ որում, առանց հիմնադրի որոշման՝ բացառելու հիմնադրի կողմից ՇՊՀ-ի օգտագործմանը հանձնված

գույքի, այդ թվում՝ շենքերի, շինությունների և հողատարածքների գրավադրումը, օտարումը կամ անհատույց օգտագործման հանձնումը.

13) Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալու տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.

14) իրեն օգտագործման իրավունքով տրամադրված գույքը հանձնելու վարձակալության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Հանձնված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքի: Հանձնված գույքի վարձակալության հանձնման արդյունքում ստացված եկամուտները պետական սեփականություն են.

15) կառավարելու իր ֆինանսները, ինքնուրույն որոշելու իր ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները՝ ներառյալ իր աշխատողների վարձատրության և նյութական խրախուսման կարգը և չափերը, սահմանելու կրթաթոշակներ.

16) իրականացնելու օրենքով և իր կանոնադրությամբ չարգելված այլ գործունեություն:

Կետ 25

1. Հոգաբարձուների խորհուրդը
2. Տնօրենը (այսուհետ՝ ռեկտոր)
3. Գիտական խորհուրդը
4. Ռեկտորատը

Կետ 27

27. ՇՊՀ-ի ֆակուլտետային խորհուրդները հոգաբարձուների խորհրդի անդամության երեքական թեկնածու են առաջադրում իրենց պրոֆեսորադասախոսական կազմերից ՇՊՀ-ի գիտական խորհրդում ընտրությանը մասնակցելու համար: ՇՊՀ-ի քոլեջի մանկավարժական խորհուրդը և ավագ դպրոցի մանկավարժական խորհուրդը հոգաբարձուների խորհրդի անդամության երկուական թեկնածու են առաջադրում իրենց ուսուցչական կազմերից՝ ՇՊՀ-ի գիտական խորհրդում ընտրությանը մասնակցելու համար: Պրոֆեսորադասախոսական և ուսուցչական կազմերից ընտրված հոգաբարձուների խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների թվի քսանհինգ տոկոսը:

27.1. ՇՊՀ-ի գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամ առանձին քվեաթերթիկով գաղտնի կերպով ընտրում է ֆակուլտետներից յուրաքանչյուրից առաջադրված թեկնածուներից մեկին, քոլեջի առաջադրած թեկնածուներից մեկին և ավագ դպրոցի կողմից առաջադրված թեկնածուներից մեկին:

27.2. Ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքում է առավելագույն ձայներ: Նույն ֆակուլտետից հավասար ձայներ ստացած թեկնածուների միջև անցկացվում է կրկնակի ընտրություն: Քոլեջից հավասար ձայներ ստացած թեկնածուների միջև անցկացվում է կրկնակի ընտրություն: Ավագ դպրոցից հավասար ձայներ ստացած թեկնածուների միջև անցկացվում է կրկնակի ընտրություն:

27.3. ՇՊՀ-ի գիտական խորհրդում ընտրվածների անվանացանկը ներկայացվում է լիազոր մարմին:

Կետ 35

1) ներկայացնելու առաջարկություններ հոգաբարձուների խորհրդի նիստի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.

2) նախապատրաստելու և հոգաբարձուների խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ, որոշումների նախագծեր.

3) ստանալու տեղեկություններ ՇՊՀ-ի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի մասին.

4) ստանալու իրենց պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

Կետ 48

7) ընդունում է պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներ, անվանական և այլ կրթաթոշակներ տալու, ՇՊՀ-ի շքանշանով և մեդալով պարգևատրելու, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար թեկնածություններ ներկայացնելու, լսարաններ, ստորաբաժանումներ անվանակոչելու մասին որոշումներ.

9) շնորհում է գիտական կոչումներ, կազմակերպում, անցկացնում և հաստատում է ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթների արդյունքները, լսում և գնահատում է (բավարար կամ անբավարար) Կենտրոնների տնօրենների, ֆակուլտետների դեկանների, Ռազմական ամբիոնի պետի, քոլեջի տնօրենի և ավագ դպրոցի տնօրենի ամենամյա հաշվետվությունները.

Կետ 49

Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 45-ը, որի առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են:

Կետ 50.

Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ), պրոռեկտորները, կենտրոնների տնօրենները, գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար), ֆակուլտետների դեկանները, ռազմական ամբիոնի պետը, քոլեջի տնօրենը, դպրոցի տնօրենը, ՇՊՀ արհմիության նախագահը, ամենաերիտասարդ գիտությունների դոկտորը եւ ամենատարեց գիտությունների դոկտորը ինչպես նաև ընտրովի անդամներ ֆակուլտետների գիտական աստիճան կամ կոչում ունեցող դասախոսներից՝ սույն կանոնադրությանն ու ՇՊՀ-ի ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան: Ընտրովի անդամներից ֆակուլտետների գիտական աստիճան կամ կոչում ունեցող դասախոսները պետք է լինեն յուրաքանչյուր ամբիոնից առնվազն մեկական հոգի: ՇՊՀ-ի գիտական խորհրդի անդամների թվի քսանհինգ տոկոսը սովորողներ են, որոնց առաջադրում են ֆակուլտետների ուսանողական խորհուրդները, իսկ ընտրությունն իրականացնում է ՇՊՀ-ի ուսանողական խոհուրդը:

Կետ 62

Պրոռեկտորներն իրականացնում են ՇՊՀ-ի գործունեության որոշակի ոլորտի անմիջական ղեկավարում՝ ռեկտորի հանձնարարություններին, հրամաններին և կարգադրություններին համապատասխան: Պրոռեկտոր կարող է նշանակվել այն անձը, ով ունի գիտական աստիճան կամ կոչում, վերջին տասը տարվա աշխատանքային գործունեության ընթացքում առնվազն երեք տարվա համապատասխան ոլորտի աշխատանքային ստաժ:

Կետ 75

ՇՊՀ-ում բարձրագույն կրթությունն իրականացվում է բակալավրի, մագիստրոսի, ինչպես նաև հետբուհական (ասպիրանտուրա և հայցորդություն) մասնագիտական կրթական ծրագրերով՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան: ՇՊՀ-ը կարող է իրականացնել նաև հանրակրթական, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական, լրացուցիչ կրթական ծրագրեր:

Կետ 90

ՇՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումներն են ֆակուլտետները, ամբիոնները, Ռազմական ամբիոնը, կենտրոնները, բաժինները, քոլեջը, ավագ դպրոցը:

Կետ 98

3) սահմանված կարգի համաձայն իրականացնում է ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի հավակնորդների թեկնածությունների քննարկումը և առաջադրում է ՇՊՀ-ի գիտական խորհրդի ընտրությանը.

4) լսում և քննարկում է ֆակուլտետի դեկանի ամենամյա հաշվետվությունը՝ անհրաժեշտության դեպքում առաջարկելով համապատասխան փոփոխություններ և ներկայացնում ՇՊՀ-ի գիտական խորհրդի գնահատմանը.

5) ՇՊՀ-ի գիտական խորհրդի հաստատած օրինակելի կանոնադրության հիման վրա քննարկում, մշակում և գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում ֆակուլտետի կանոնադրությունը.

6) ՇՊՀ-ի գիտական խորհրդի ընտրությանը առաջադրում է ՇՊՀ-ի հոգաբարձուների խորհրդում ֆակուլտետի ներկայացուցիչների թեկնածուներին.

7) ընտրում է ՇՊՀ-ի գիտական խորհրդի անդամներ ֆակուլտետի ամբիոնների կողմից առաջադրված գիտական աստիճան կամ կոչում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներից՝ ապահովելով յուրաքանչյուր ամբիոնի ներկայացուցչի ներգրավվածությունը.

8) լուծում է ֆակուլտետի ուսումնական, գիտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ գործունեության հարցերը.

9) ՇՊՀ-ի ռեկտորին է ներկայացնում ֆակուլտետի ուսումնական պլանները՝ ՇՊՀ-ի գիտական խորհրդում հաստատելու համար.

10) լուծում է սույն կանոնադրությունից և ՇՊՀ-ի այլ ներքին իրավական ակտերից բխող՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեությանը վերաբերող այլ հարցեր:

Կետ 99

Ֆակուլտետի խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն ութ անգամ: Ֆակուլտետի խորհրդում որոշումներն ընդունվում են խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ կամ ֆակուլտետի կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը պարտադիր են ֆակուլտետի աշխատակիցների և ուսանողների համար:

Կետ 101

Ֆակուլտետի դեկան կարող է ընտրվել այն անձը, ով ունի գիտական աստիճան, վերջին տասը տարվա աշխատանքային գործունեության ընթացքում առնվազն երեք տարվա համապատասխան ոլորտի աշխատանքային ստաժ:

Կետ 102

Դեկանն ընտրվում է բաց մրցույթով, գիտական խորհրդում՝ գաղտնի քվեարկությամբ, հինգ տարի ժամկետով: Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով ստանում է գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելին: ՇՊՀ-ի ռեկտորը ընտրությունների արդյունքների հիման վրա ընտրված դեկանին նշանակում է պաշտոնում և սահմանված կարգով կնքում է աշխատանքային պայմանագիր: Դեկանի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է ՇՊՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատված՝ դեկանների ընտրության կանոնակարգին համապատասխան: Դեկանն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավել, քան երկու ժամկետ անընդմեջ անկախ ֆակուլտետի վերանվանումից կամ վերամիավորումից:

Կետ 103

2) ապահովում է ՇՊՀ-ի մարմինների և ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը.

3) ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալի թեկնածությունը և ֆակուլտետի խորհրդի կազմը.

Կետ 105

Ամբիոնները (ներառյալ լաբորատորիաները, կաբինետները), բացառությամբ Ռազմական ամբիոնի, ֆակուլտետի ուսումնագիտական գործընթացի կազմակերպման կառուցվածքային հիմնական ստորաբաժանումներն են: Ամբիոնի գիտամանկավարժական կազմում ընդգրկվում է պրոֆեսորադասախոսական կազմը (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս):

105.1. ՇՊՀ-ի կազմում գործող Ռազմական ամբիոնը առանձին կառուցվածքային ստորաբաժանում է:

Ռազմական ամբիոնը միաժամանակ ՀՀ պաշտպանության նախարարության ստորաբաժանում է և ՀՀ զինված ուժերի համար պատրաստում է նաև պահեստազորի սպաներ:

Ռազմական ամբիոնի գիտամանկավարժական կազմում ընդգրկվում է սպայական կազմը (ռազմական ամբիոնի պետ, ամբիոնի պետի տեղակալ-ուսումնական մասի պետ, ամբիոնի ավագ

դասախոս և դասախոս): Ռազմական ամբիոնի գործունեությունը համակարգվում է ռեկտորի կամ ռեկտորի հրամանով՝ պրոռեկտորներից մեկի կողմից:

Կետ 107

Ամբիոնը, բացառությամբ Ռազմական ամբիոնի, գործում է սույն կանոնադրությանը, ֆակուլտետի և ամբիոնի կանոնադրություններին համապատասխան:

107.1. Ռազմական ամբիոնը գործում է սույն կանոնադրությանը, ՀՀ ՊՆ ղեկավար փաստաթղթերի (հրամանների և հրահանգների) և Ռազմական ամբիոնի կանոնադրությանը համապատասխան:

Կետ 109

ՇՊՀ-ի ամբիոններում (բացառությամբ Ռազմական ամբիոնի) պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը, նրանց և ՇՊՀ-ի միջև աշխատանքային հարաբերություններն իրականացվում են պայմանագրային հիմունքներով, մրցութային կարգով:

109.1 ՇՊՀ-ի Ռազմական ամբիոնում սպայական կազմի թափուր պաշտոնների նշանակումն իրականացվում է ՀՀ ՊՆ ռազմական ուսումնական հաստատություններում՝ դասախոսական կազմի թափուր պաշտոնների մրցույթի կազմակերպման և անցկացման կարգին համապատասխան:

Կետ 110

Ամբիոնը (բացառությամբ Ռազմական ամբիոնի) ղեկավարում է վարիչը, ով ընտրվում է բաց մրցույթով, գիտական խորհրդում՝ գաղտնի քվեարկությամբ, հինգ տարի ժամկետով: Ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով ստանում է գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելին: Ընտրությունների արդյունքների հիման վրա ընտրված ամբիոնի վարիչին պաշտոնում նշանակում է ՇՊՀ-ի ռեկտորը և սահմանված կարգով կնքում է աշխատանքային պայմանագիր: Ամբիոնի վարիչն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավել, քան երկու ժամկետ անընդմեջ անկախ ամբիոնի վերանվանումից, վերամիավորումից: Ամբիոնի վարիչ կարող է ընտրվել այն անձը, ով ունի գիտական աստիճան, վերջին տասը տարվա աշխատանքային գործունեության ընթացքում առնվազն երեք տարվա համապատասխան ոլորտի աշխատանքային ստաժ: Ամբիոնի վարիչի գործունեությունը համարվում է գիտամանկավարժական աշխատանք:

110.1. Ռազմական ամբիոնը ղեկավարում է ամբիոնի պետը: Ռազմական ամբիոնի պետի գործունեությունը համարվում է նաև գիտամանկավարժական աշխատանք:

Կետ 111

Ամբիոնի ուսումնագիտական գործունեությանը վերաբերող հիմնական հարցերը քննարկվում են ամբիոնի գիտամանկավարժական կազմի նիստում: Ամբիոնի ուսումնաօժանդակ կազմի աշխատողներն ամբիոնի նիստին իրավունք ունեն մասնակցելու խորհրդակցական ձայնի իրավունքով: Ամբիոնի նիստի որոշումների կատարումը պարտադիր են ամբիոնի աշխատակիցների և ուսանողների համար:

Կետ 116

ՇՊՀ-ի աշխատողները բաժանվում են գիտամանկավարժական (պրոֆեսորադասախոսական), գիտական, մանկավարժական, վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական, արտադրական և այլ խմբերի:

Կետ 117

ՇՊՀ-ի սովորողներ են համարվում աշակերտները, ուսանողները և հետազոտողի կրթական ծրագրում (ասպիրանտներ, հայցորդներ) սովորող անձինք:

Կետ 119

ՇՊՀ-ի աշխատողները օրենքով սահմանված կարգով իրավունք ունեն.

1) ընտրելու և ընտրվելու ՇՊՀ-ի պաշտոններում և կառավարման մարմիններում (բացառությամբ Ռազմական ամբիոնի), ընդգրկվելու և մասնակցելու ՇՊՀ-ի մարմինների աշխատանքներին՝ օրենքով, ՇՊՀ-ի կանոնադրությամբ և կոլեկտիվ պայմանագրով սահմանված կարգով.

4) միավորվելու արհեստակցական կազմակերպություններում (բացառությամբ Ռազմական ամբիոնի)

7) սահմանված կարգով ստանալու վճարվող կամ չվճարվող արձակուրդ՝ Ռազմական ամբիոնի սպայական կազմի արձակուրդը կանոնակարգվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով.

Կետ 120

ՇՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի բոլոր թափուր պաշտոնների նշանակումը, բացառությամբ Ռազմական ամբիոնի սպայական կազմի, կատարվում է ըստ աշխատանքային պայմանագրի, որը կնքվում է մինչև հինգ տարի ժամկետով: Աշխատանքային պայմանագրի կնքմանը նախորդում է բաց մրցութային ընտրություն: Աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո գիտամանկավարժական կազմի աշխատողի հետ կարող է կնքվել նոր պայմանագիր՝ մինչև մեկ տարի ժամկետով, առանց մրցութային ընտրության, պայմանագրային ժամկետում նրա գիտամանկավարժական գործունեության գնահատման հիման վրա:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ